Ալեքսանդր Շիրվանզադե

Հայ պեստալոցցին

Անցյալ կիրակին կարմիր կիրակի էր: Չգիտեմ ուրիշ քաղաքներում նա ինչ գույն ուներ, Թիֆլիսում մոխրագույն էր, իսկ շրջակա սարերի վրա սպիտակագույն: Երկինքը իր աչքունքը այնպես թթվացրել էր, որ կարծես ռևիզիայի ենթարկված բանկի կառավարչի կամ բաժանորդ չունեցող հայ խմբագրի դեմք լիներ:

Թեև անձրևում էր, բայց տնից դուրս գալ կարելի էր: Ճաշից հետո գնացի շրջակա Մախաթի սարի ստորոտը, դեպի Արսենալների կողմը: Այստեղ ի պատիվ օրվա տոնին, որին ռուսները «Կրասնայա Գորկա» են կոչում, մի հանդես կար: Մի ընդարձակ հրապարակի վրա սարքել էին ճոճանակներ, բարձր սանդուղքներ, տրապեցիաներ և կարուսելներ:

Շարմանկան նվագում էր, ամբոխը թռչկոտում ճոճանակների վրա՝ հարբած այծերի նման: Այստեղ ես տեսա «հինավուրց, դպրոցի» բոլոր աշակերտներին: Հոգաբարձության վճռով նրանք դուրս էին եկել կրթական նպատակով արշավանք (էքսկուրսիա) կատարելու: Ամեն մի աշակերտ իր հետ բերել էր նախաճաշիկ. մի ձու և մի ընկույզ: Արշավանքին ուղեկցվում էր հռչակավոր հայ Պեստալոցցին, որին աշակերտները «փայտյա, իշխան» են անվանում իրանց մեջ:

«Հառա՛ջ, հառա՛ջ օն անդր, հառա՛ջ», գոչեց հայ Պեստալոցցին «Մեսրոպյան տառերի ճիշտ արտասանությամբ, և աշակերտները մրջյունների պես թափվեցին՝ կարուսելի վրա: Անշուշտ դուք գիտեք՝ ինչ ասել է կարուսել: Դա մի հաստ սյունի վրա շինած կոլորակ ծածկոց է, որի տակ ամրացրած են նստարաններ ձիերի, եզների, սագերի և էշերի ձևով: Մարդիկ նստում են այդ եզների, սագերի, էշերին

ձիերի վրա, շարմանկան նվագում է և ծածկոցը պտտում, իր հետ պտտեցնելով և էշերի, եզների, սագերի և ձիերի վրա նստած մարդկանց:

Հինավուրց դպրոցի աշակերտների զվարճությանը չափ չկար: Բայց հայ Պեստալոցցին այն համոզմունքին էր որ ամեն մի զվարճություն պետք է կրթական նշանակություն ունենա: Ուստի նա հանեց մի հեղինակավոր գերմանացի մանկավարժի ձեռնարկներից մեկը, երեսը շուռ տվեց աշակերտներից և թաքուն անգիր արեց մի հատված: Ապա, բարձրանալով մի քարի վրա և իր դեմքին պառլամենտեոր-լորդի լրջություն տալով՝ սկսեց կարուսելի օրինակով պարզաբանել տիեզերքի մի օրենքը:

«Տղերք, ասաց նա, պետք է իմանանք, որ տիեզերքում ամեն բան պտտում է ճիշտ այնպես, ինչպես այդ կարուսելը և դուք: Օրինակ, մեր երկրագունդը պտտում է արեգակի շուրջը, լուսինը՝ երկրագնդի շուրջը և այդպես, անընդհատ, գիշեր-ցերեկ: Բայց մի տարբերություն կա, որի վրա դարձնում եմ ձեր ուշադրությունը: Երկրագունդը և լուսինը պտտում են առանց որևէ հենարանի, իսկ դուք (այդ միջոցին շարմանկան նվագեց «Ռոբերտ դիավոլից» մի արիա), դո՛ւք, մեր հինավուրց դպրոցն եք այսօր ներկայացնում, այդ սյունի շուրջ պտտում եք էշերի, ձիերի և սագերի վրա նստած և նրանց օգնությամբ: Ուրեմն ձեր դիրքն ավելի հաստատ է, քան թե տիեզերքինը: Օրիներք աստծուն և միշտ առաջ, առաջ, անդադար առաջ ընթանանք» . . . Ավարտելով իր խոսքը, Պեստալոցցին ձեռով հրեց սագերից մեկին, և ծածկոցը սկսեց ավելի արագ պտտել: Աշակերտները նայեցին ցած և ապշած մնացին, տեսնելով, որ իրանք, որ ներկայացնում են մի ամբողջ հինավուրց դպրանոց, անդադար պտտում են, պտտում և միշտ միևնույն տեղն են . . .

Եվ միշտ նույն տեղում կպտտեք, ասացի, թողնելով կարուսելը և հեռանալով: